**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 73**
**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ**
04-ը մայիսի 2024թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 31-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Ա. Հ. Մակարյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին, այնուհետև քվեարկության դրեց նիստի օրակարգը.

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերության կանոնակարգի հաստատում:
(զեկ.՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Աթոյան**):
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կարգի հաստատում:
(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյան** )
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ներքին կարգապահական կանոնների հաստատում:
(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյան**)
4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի պրակտիկաների կազմակերպումից և իրականացումից ուսանողների բավարարվածության ուսումնասիրության արդյունքների մասին:
(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյան**)

Բաց քվեարկությամբ՝ 31 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ **որոշվեց**.

**ՈՐՈՇՈՒՄ**

- Հաստատել նիստի օրակարգը:

***<u>Օրակարգի առաջին</u>՝*** ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերության կանոնակարգի հաստատում›› հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Աթոյանի** հաղորդումը:

Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ գիտական խորհուրդը 2024 թ. փետրվարի 29-ի թիվ 12/2 որոշմամբ հաստատել է ԵՊՀ ՈՒԳԸ նոր կանոնակարգը, մյուս կողմից համաձայն ԵՊՀ ԻՄ գործող կանոնադրության 81-րդ կետի ուսանողական գիտական ընկերության գործունեությունը կարգավորվում է ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության կանոնադրությամբ և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի որոշումներով: Ելնելով ԵՊՀ ԻՄ առանձնահատկություններից՝ անհրաժեշտություն կա ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ կանոնակարգ ունենալու: Նախագիծը ամբողջական կարող եք տեսնել **հավելված 1-ում:** Կանոնակարգը գրվել է ԵՊՀ համապատասխան կանոնակարգի, ԵՊՀ ԻՄ կանոնադրության և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017թ. հոկտեմբերի 28-ին կայացած թիվ 27 նիստում հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերության կանոնադրության հիման վրա: Քննարկվել է նաև ԵՊՀ ԻՄ ուսանողական կառույցներում: Այնուհետև Մ. Աթոյանը առանձնացրեց կատարված հիմնական փոփոխությունները.

«1.1 ԵՊՀ ԻՄ ուսանողական գիտական ընկերությունը ԵՊՀ ԻՄ բակալավրիատի ու մագիստրատուրայի ուսանողներին, ասպիրանտներին, հայցորդներին (այսուհետ՝ սովորող) միավորող համալսարանական ստորաբաժանում է, որի նպատակն է նպաստել սովորողների

գիտական, ստեղծագործական ու հոգևոր զարգացմանը:», մինչ այժմ եղել է՝ ներկայացուցչական մարմին;

«1.3 Ընկերության կանոնակարգն ու նրանում կատարվող փոփոխությունները հաստատվում են ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կողմից՝ տնօրենի նախաձեռնությամբ, *Ուսանողների հետ տարվող աշխատանքների պատասխանատուի ներկայացմամբ*»:

«3.2 Ֆակուլտետի ՈՒԳԸ առաջադրմամբ ֆակուլտետի գիտական խորհուրդը հաստատում է ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահի, քարտուղարի թեկնածությունները, որոնք կազմակերպում են ֆակուլտետի ՈՒԳԸ աշխատանքները, համակարգում են նրա հանձնախմբերի աշխատանքները՝ ներկայացնելով ֆակուլտետի ՈՒԳԸ-ն ու նրա ծրագրերը համալսարանի ՈՒԳԸ գիտական խորհրդում:»

«3.10 Ընկերության գիտական խորհուրդը՝

ա) քննարկում և որոշում է Ընկերության գործունեության կարևորագույն ուղղություն-ները, միջոցներ է ձեռնարկում որոշումներն իրականացնելու համար,

բ) ներկայացնում է առաջարկներ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին, Ուսանողների հետ տարվող աշխատանքների պատասխանատուին,

գ)ընդունում է ի գիտություն ՈՒԳԸ նախագահի տարեկան հաշվետվությունը,

դ)մշակում է Ընկերության ընթացիկ ու հեռանկարային ծրագրերը, հաստատում և համակարգում է ֆակուլտետային ՈՒԳԸ-ների ծրագրերն ու աշխատանքները,

ե) հաստատում է իր աշխատակարգը,

զ) ստեղծում, վերակազմավորում և լուծարում է Ընկերության՝ սույն կանոնակարգով չսահմանված աշխատանքային կառուցվածքային միավորներ, ինչպես նաև հաստատում է նրանց կազմն ու աշխատակարգը, ընդ որում՝ նրանց կարող է լիազորել իր իրավասությանը վերաբերող որոշ հարցերի լուծման իրավունք,

է)շնորհում է Ընկերության պատվավոր անդամի կոչում և կանոնակարգում է Ընկերության անդամությանը վերաբերող այլ հարցեր,

ը)վավերացնում է Ընկերության անունից կնքած պայմանագրերն ու համաձայնագրերը»:

«3.12 Ընկերության նախագահը ԵՊՀ ԻՄ տնօրենի ներկայացմամբ հաստատվում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կողմից»:

«3.13 Նախագահի տեղակալին ու քարտուղարին մեկամսյա ժամանակահատվածում ԵՊՀ ԻՄ տնօրենի հաստատմանն է ներկայացնում Ընկերության նախագահը »

**Արտահայտվեցին՝** ԵՊՀ ԻՄ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, ՄԳՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, վարիչի ժ/պ, ա.գ.թ. Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը և այլք:

Մասնավորապես Ա. Մակարյանը նշեց, որ այսուհետ ունենալու ենք ուսանողների հետ տարվող աշխատանքների պատասխանատու, որը պետք է վարձատրվի:

Արտահայտվողները առաջարկեցին.

**1.1** կետում «…նպատակն է նպաստել սովորողների գիտական, ստեղծագործական ու հոգևոր զարգացմանը» արտահայտության փոխարեն գրել «…նպատակն է նպաստել սովորողների գիտական, կրթական, ստեղծագործական ու հոգևոր-մշակութային զարգացմանը»:

«2.1 Ընկերության նպատակն է նպաստել սովորողների գիտական, ստեղծագործական ու հոգևոր զարգացմանը»-ը գրել՝ «2.1 Ընկերության նպատակն է նպաստել սովորողների գիտական, կրթական, ստեղծագործական ու հոգևոր-մշակութային զարգացմանը»:

«3.18 Ընկերության քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները՝ առաջնորդվելով Ընկերության գիտական խորհրդի աշխատակարգով» կետը՝ գրել

«3.18 Ընկերության քարտուղարը իրականացնում է ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ

փաստաթղթաշրջանառությունը՝ առաջնորդվելով Ընկերության գիտական խորհրդի աշխատակարգով»:

Բաց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ N 73/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 81-րդ և 20-րդ կետերով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 20-րդ կետով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2017թ. հոկտեմբերի 28-ին կայացած թիվ 27 նիստում հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերության կանոնադրությունը:
2. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերության կանոնակարգը՝ համաձայն հավելված 1-ի:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

***Օրակարգի երկրորդ՝*** ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կարգի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյանի** հաղորդումը:

Նա մասնավորապես նշեց, որ այս կարգը նույն անցած տարվա կարգն է, բովանդակային ոչ մի փոփոխություն չկա, միայն հանվել է ընդունելության տարեթիվը, և ամսաթվերը դարձվել են դինամիկ, որպեսզի ամեն տարի այս հարցի քննարկման անհրաժեշտությունը չլինի:

**Արտահայտվեցին՝** ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ, ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը և այլք:

Մասնավորապես քննարկվեց կարգի 3-րդ դրույթը («Մագիստրոսական կրթական ծրագիրը իրականացվում է, եթե առաջին կուրս ընդունված ուսանողների թիվը 10-ից պակաս չէ»)՝ առաջարկվեց թիվը փոքրացնել: Ի պատասխան, Ա. Մակարյանը նշեց, որ կարգը ներկայացված է ԵՊՀ մոտեցումների համաձայն, այդ թիվը հաշվարկված է, և օրինակ հումանիտար գիտությունների մասնագիտությունների համար 6 է, և սրանից քիչ թվով ուսանողների ընդունելությունը ոչ շահութաբեր է:

Բաց քվեարկությամբ՝ 31 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ N 73/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի ընդունելության կարգը՝ համաձայն հավելված 2-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

***Օրակարգի երրորդ՝*** ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի ներքին կարգապահական կանոնների հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյանի** հաղորդումը:

Ա. Մակարյանը ներկայացնելով նեքին կարգապահական կանոնները, նշեց, որ նախորդի հետ համեմատ շատ բան չի փոխվել (նախագիծը կարող եք տեսնել հավելված 3-

ում) և մանրամասն անդրադարձավ աշխատողների ու սովորողների հիմնական իրավունքներին և պարտականություններին, խրախուսելուն և կարգապահական տույժի ենթարկելուն, աշխատողների աշխատաժամանակին առնչվող հարցերին:

Աշխատաժամանակի կապակցությամբ շեշտադրվեց 23-25-րդ դրույթներում կատարված փոփոխությունները, մասնավորապես նշվեց, որ ԵՊՀ ԻՄ-ում աշխատանքները կազմակերպվում են շաբաթվա երեքշաբթիից շաբաթ օրերին՝ ժամը 9.00-19.00-ն ընկած ժամանակահատվածում: ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի (ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ ու դասախոս) և գիտական աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ երեսուն ժամ ընդհանուր տևողությամբ: Բուհի մյուս աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ երեսունվեց ժամ ընդհանուր տևողությամբ: ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի և գիտական աշխատողների աշխատաժամանակը սահմանվում է 9.15-19.00-ն ընկած ժամանակահատվածում՝ պահպանելով օրվա ծանրաբեռնվածությունը: Մասնաճյուղի մյուս աշխատողների աշխատանքային օրվա սկիզբը երեքշաբթիից ուրբաթ օրերին սահմանվում է 9.00-ին, ավարտը՝ 16.45-ին, իսկ շաբաթ օրվա սկիզբը սահմանվում է 9.00-ին, ավարտը՝ 16.30-ին:

Ա. Մակարյանը նշեց, որ ուսանողների մասով եղել են խստացումներ՝ նոր ուսումնական պլաններով շաբաթական ծանրաբեռնվածությունը 30 ժամից դարձել է 22 ժամ, որի հետևանքով նկատողությունների շեմերը նվազել են 30%-ով՝ «Ուսումնական կիսամյակի ընթացքում դասերից 40 /քառասուն/ ակադեմիական ժամից (հեռակա ուսումնառության համակարգի դեպքում՝ քսան /20/ ակադեմիական ժամից) ավելի անհարգելի բացակայության դեպքում կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի կողմից տվյալ սովորողին հայտարարվում է նկատողություն: Ուսումնական կիսամյակի ընթացքում դասերից 60 /վաթսուն/ ակադեմիական ժամից (հեռակա ուսումնառության համակարգի դեպքում՝ 30 /երեսուն/ ակադեմիական ժամից) ավելի անհարգելի բացակայության դեպքում տնօրենի կողմից տվյալ սովորողին հայտարարվում է խիստ նկատողություն»:

Այնուհետև Ա. Մակարյանը նշեց, որ ծանուցումները լինելու են գրավոր, իսկ ուսանողների հարգելի համարելու կարգը հստակեցված է՝ ավելացվել է նախորդ կարգից:

**Արտահայտվեցին**՝ ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ . Օթարյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը, ԿԲԴՎ բաժնի վարիչ Ն. Գրիգորյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարչիչի պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, ուսանողներ և այլք:

Մասնավորապես Մ. Օթարյանը նշեց, որ բացակայության դեպքում ուսանողի կողմից դեկանին տեղեկացնելը պետք է լինի կանոնակարգված՝ օրինակ էլեկտրոնային փոստի կամ հեռախոսային նամակի միջոցով: Ն. Գրիգորյանը առաջարկեց 1. կետում «աշխատողների ու սովորողների (աշակերտ, ուսանող (բակալավրիատի ու մագիստրատուրայի), ասպիրանտ, հայցորդ) հիմնական իրավունքները,» արտահայտությունը գրել հետևյալ կերպ՝ «աշխատողների ու սովորողների հիմնական իրավունքները,»

Բաց քվեարկությամբ՝ 31 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 73/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2017թ. դեկտեմբերի 26-ին կայացած թիվ 28 նիստում հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ներքին կարգապահական կանոնները:

2. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ներքին կարգապահական կանոնները նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 3-ի:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

***<u>Օրակարգի չորրորդ՝</u>*** ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի պրակտիկաների կազմակերպումից և իրականացումից ուսանողների բավարարվածության ուսումնասիրության արդյունքների մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյանի** հաղորդումը:

Մ. Ճաղարյանը նշեց, որ ՄԿՈԱ բաժինն իրականացրել է 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի սկզբում մասնագիտական պրակտիկա անցած ուսանողների հարցում: Այն նպատակ ուներ պարզելու ուսանողների բավարարվածությունը պրակտիկայի կազմակերպումից և իրականացումից, անցկացման վայրից, ժամանակահատվածից, տևողությունից, պրակտիկայի ծրագրից, ընդունող կազմակերպության աջակցությունից, պրակտիկայի ղեկավարի աշխատանքից, վերհանելու պրակտիկայի հետ կապված խնդիրները, հավաքագրելու ուսանողների կարծիքները և առաջարկությունները: Հարցմանը մասնակցել է պրակտիկա անցած առկա ուսուցման 12 կրթական ծրագրերի 4-րդ կուրսերի 170 ուսանողներից 155-ը (91.2%-ը), որը շատ բարձր ցուցանիշ է: Արդյունքները ՄԿՈԱ բաժնում ամփոփվել և վերլուծվել են ըստ կրթական ծրագրերի և ֆակուլտետների: Վերջին տարիներին բարելավման ուղղությամբ ձեռնարկված քայլերի և միջոցառումների շնորհիվ էապես բարձրացել է պրակտիկաներից ուսանողների բավարարվածության մակարդակը: Ըստ դիտարկված գրեթե բոլոր հարցերի՝ միջին միավորները գերազանցել են 4.5 միավորը, բաց հարցերում գերակշռել են դրական կարծիքները և անհաղթահարելի խնդիրներ (ըստ ուսանողների) չեն եղել:

Այնուհետև, ամփոփելով հարցման արդյունքները, Մ. Ճաղարյանը նշեց, որ պրակտիկայի կազմակերպման և իրականացման գործընթացը Մասնաճյուղում հաջողված է, որի մասին է վկայում նաև ուսանողների ընդհանրական կարծիքը: Ուսանողները փաստում են, որ պրակտիկան իսկապես կատարել է իր դերը, նպաստել է իրենց մասնագիտական և անձնային որակների զարգացմանը, բարձրացրել է վստահությունը մասնագիտական կարողությունների նկատմամբ, մեծացրել է մասնագիտության նկատմամբ սերը և հետաքրքրությունը:

Դիտարկելով ուսանողների բարձրաձայնած խնդիրները՝ կրթական ծրագրերի ղեկավարներին, ամբիոնների վարիչներին և ֆակուլտետների ղեկավարներին բաժնի կողմից առաջարկվեց՝

- քննարկել ուսանողների բարձրաձայնած նեղ մասնագիտական խնդիրները և առաջարկները, ավելի խորությամբ անդրադառնալ պրակտիկաների ծրագրերին և դրանց իրականացմանը, տալ հնարավոր լուծումներ,
- կրթական ծրագրերի վերանայման ժամանակ հաշվի առնել ուսանողների կարծիքները, և պրակտիկայի անցկացման վայրի, ժամանակահատվածի ու տևողության հետ կապված խնդիրներին լուծումներ տալ հնարավորության սահմաններում,
- ուշադրություն դարձնել «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերի ուսանողների թարգմանչական պրակտիկ կարողությունների զարգացման վրա,
- «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերի ուսանողների հետ իրականացնել հոգեբանական աշխատանք, որպեսզի նրանք կարողանան արդյունավետ աշխատել նաև խնդիրներ ունեցող աշակերտների հետ:

Մ. Ճաղարյանի ամբողջական հաղորդումը կարող եք տեսնել հավելված 4-ում:

**Արտահայտվեցին՝** ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ, ա.գ.թ. Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժ/պ, ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը, Օտար լեզուների ամբիոնի վարիչի ժ/պ, բ.գ.թ. դոցենտ Ք. Հարությունյանը, Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի ժ/պ, տեխ. գ.թ., դոցենտ Ա. Հովակիմյանը, Պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության բաժնի վարիչ պ.գ.թ. Լ. Բեգինյանը, ԵՊՀ ԻՄ ՈՒԽ նախագահ Դ. Ալեքսանյանը, ՈՒԳԸ նախագահ Ս. Աբազյանը և այլք:

Մասնավորապես Ք. Հարությունյանը նշեց, որ Անգլերեն լեզու և գրականություն կրթական ծրագրով սովորող ուսանողներն ի սկզբանե չէին ցանկանում պրակտիկան **Վիքիպեդիայի** կայքում աշխատանքների իրականացմամբ անցկացնելուն, փոխարենը՝ ցանկանում էին գնալ կոնկրետ աշխատավայր թարգմանչական աշխատանքներ իրականացնելու համար, և առաջարկեց ուսանողներին տալ հնարավորություն պրակտիկան այլ վայրերում անցկացնելու համար: Մ. Օթարյանը նշեց, որ աշխատանքը **Վիքիպեդիայում** տեսանելի և վերահսկելի է, սակայն ուսանողներն ի սկզբանե վատ էին տրամադրվել: Գիտխորհրդի ուսանող անդամները առաջարկեցին Անգլերեն լեզու և գրականություն կրթական ծրագրի ուսանողներին տալ մանկավարժի որակավորում և հնարավորություն ընձեռել պրակտիկան անցկացնել դպրոցներում: Ա. Մակարյանը նշեց, որ անհրաժեշտ է ուսանողների առաջարկները հավաքագրել պրակտիկան առավել արդյունավետ իրականացնելու համար, և հանձնարարեց ՄԿՈԱ բաժնին վերհանված խնդիրներն ու կարծիքներն ուղարկել համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝ խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկություններ ստանալու և դրանց հնարավոր լուծումներ տալու նպատակով:

Բաց քվեարկությամբ՝ 31 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ

- ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի պրակտիկաների կազմակերպումից և իրականացումից ուսանողների բավարարվածության ուսումնասիրության արդյունքների մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյանի** հաղորդումն ընդունել ի գիտություն**:**
- Հանձնարարել ՄԿՈԱ բաժնին վերհանված խնդիրներն ու կարծիքներն ուղարկել համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝ խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկություններ ստանալու և դրանց հնարավոր լուծումներ տալու նպատակով:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ

**Հավելված 1**

**Հաստատված է**
**ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի**
**2024թ. մայիսի 04-ի նիստի թիվ 73/ 1 որոշմամբ**
**ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան**

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
# «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ԵՊՀ ԻՄ բակալավրիատի ու մագիստրատուրայի ուսանողներին, ասպիրանտներին, հայցորդներին (այսուհետ՝ սովորող) միավորող համալսարանական ստորաբաժանում է, որի նպատակն է նպաստել սովորողների գիտական, կրթական, ստեղծագործական ու հոգևոր-մշակութային զարգացմանը:

1.2. Ընկերությունը գործում է ԵՊՀ ԻՄ կանոնադրության և սույն կանոնակարգի հիման վրա:

1.3. Ընկերության կանոնակարգն ու նրանում կատարվող փոփոխությունները հաստատվում են ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կողմից՝ տնօրենի նախաձեռնությամբ, Ուսանողների հետ տարվող աշխատանքների պատասխանատուի ներկայացմամբ:

1.4. Ընկերությունը սահմանված կարգով կարող է ունենալ կլոր կնիք, անկյունային դրոշմ, պաշտոնաթուղթ:

1.5. Ընկերությունն իր հարաբերությունները ԵՊՀ ԻՄ ղեկավար մարմինների հետ կարգավորում է ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ, սույն կանոնակարգով և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի համապատասխան որոշումներով:

1.6. Ընկերությունն իր նպատակների ու խնդիրների լուծման, երկարաժամկետ ծրագրերի իրականացման համար համագործակցում է Տնօրենության, Ուսումնամեթոդական վարչության, Ուսանողական խորհրդի և այլ ստորաբաժանումների ու կազմակերպությունների հետ՝ ելնելով փոխօգնության, փոխշահավետության սկզբունքներից ու համապատասխան պայմանագրերից:

1.7. Ընկերության լրիվ անվանումն է՝ հայերեն՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերություն, ռուսերեն՝ Студенческое научное Общество Иджеванского филиала фонда «Ереванский государственный университет», անգլերեն՝ Student scientific society of Ijevan branch of «Yerevan State University» foundation, կարճ անվանումները՝ հայերեն՝ ԵՊՀ ԻՄ ՈԻԳԸ, ռուսերեն՝ ЕГУ ИФ СНО, անգլերեն՝ YSU IB SSS::

## 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Ընկերության նպատակն է նպաստել սովորողների գիտական, կրթական, ստեղծագործական ու հոգևոր-մշակութային զարգացմանը:

2.2 Ընկերության խնդիրներն ու գործունեության հիմնական ուղղություններն են.

ա) գիտական ու կրթական ոլորտներում ուսանողական նախաձեռնությունների սատարում և

իրականացում

բ) ուսանողական գիտաժողովների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների ու գիտական, կրթական այլ ուղղվածություն ունեցող միջոցառումների կազմակերպում՝ ընդգրկելով նաև արտահամալսարանական գիտական ներուժը,

գ) համալսարանական երիտասարդական գիտական ներուժի նպատակաուղղված օգտագործում ու նրան առնչվող տեղեկատվության համակարգում,

դ) համակողմանի աջակցության ապահովում շնորհաշատ սովորողներին,

ե) գիտական խմբերում ու գիտական տարբեր ծրագրերում սովորողների ընդգրկում,

զ) սովորողների գիտական աշխատանքների և այլ նյութերի հրատարակում,

է) գիտական այլ կենտրոնների հետ կապի հաստատում ու տեղեկատվության փոխանակում։

## 3 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

### Ա. ՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Ընկերության կառուցվածքային հիմնական միավորները ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերություններն են, որոնք ձևավորվում են ամբիոնների երաշխավորությամբ ներկայացված առնվազն երկու սովորողներից։ Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն մշակում ու իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են ՈՒԳԸ կանոնակարգի նպատակների ու խնդիրների իրականացմանը։

3.2 Ֆակուլտետի ՈՒԳԸ առաջադրմամբ ֆակուլտետի գիտական խորհուրդը հաստատում է ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահի, քարտուղարի թեկնածությունները, որոնք կազմակերպում են ֆակուլտետի ՈՒԳԸ աշխատանքները, համակարգում են նրա հանձնախմբերի աշխատանքները՝ ներկայացնելով ֆակուլտետի ՈՒԳԸ-ն ու նրա ծրագրերը համալսարանի ՈՒԳԸ գիտական խորհրդում։

3.3 Ֆակուլտետի ՈՒԳԸ նիստերը հրավիրվում են ամիսն առնվազն մեկ անգամ։

3.4 Նիստն իրավազոր է, եթե ներկա են անդամների կեսից ավելին։ Որոշումներն ընդունվում են ներկաների պարզ մեծամասնությամբ։ Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կարող է մշակել իր կանոնակարգն ու սահմանել սույն կանոնակարգին չհակասող կառուցվածքային այլ միավորներ։

3.5 Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահի որոշմամբ կամ անդամների 1/3-ի պահանջով կարող է հրավիրվել ֆակուլտետային ՈՒԳԸ արտահերթ նիստ։

3.6 Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահը ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ է, Ընկերության գիտական խորհրդի անդամ։

3.7 Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կարող է ձևավորել իր գործունեությանն առնչվող ակումբներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել նաև ֆակուլտետի այլ սովորողներ։

### Բ. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

3.8 Ընկերության ղեկավար մարմինը գիտական խորհուրդն է, որի նիստերը գումարվում են ուսումնական կիսամյակում ոչ պակաս, քան երկու անգամ։

3.9 Ընկերության գիտական խորհրդի կազմում ընդգրկվում են Ընկերության նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը, հանձնաժողովների ու ֆակուլտետային ՈՒԳԸ- ների նախագահները։

3.10 Ընկերության գիտական խորհուրդը՝

ա) քննարկում և որոշում է Ընկերության գործունեության կարևորագույն ուղղությունները, միջոցներ է ձեռնարկում որոշումներն իրականացնելու համար,

բ) ներկայացնում է առաջարկներ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին, Ուսանողների հետ տարվող աշխատանքների պատասխանատուին,

գ) ընդունում է ի գիտություն ՈՒԳԸ նախագահի տարեկան հաշվետվությունը,

դ) մշակում է Ընկերության ընթացիկ ու հեռանկարային ծրագրերը, հաստատում և համակարգում է ֆակուլտետային ՈՒԳԸ-ների ծրագրերն ու աշխատանքները,

ե) հաստատում է իր աշխատակարգը,

զ) ստեղծում, վերակազմավորում և լուծարում է Ընկերության՝ սույն կանոնակարգով չսահմանված աշխատանքային կառուցվածքային միավորներ, ինչպես նաև հաստատում է նրանց կազմն ու աշխատակարգը, ընդ որում՝ նրանց կարող է լիազորել իր իրավասությանը վերաբերող որոշ հարցերի լուծման իրավունք,

է) շնորհում է Ընկերության պատվավոր անդամի կոչում և կանոնակարգում է Ընկերության անդամությանը վերաբերող այլ հարցեր,

ը) վավերացնում է Ընկերության անունից կնքած պայմանագրերն ու համաձայնագրերը,

3.11 Ընկերության գիտական խորհրդի նիստն իրավազոր է, եթե ներկա են անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են ներկաների պարզ մեծամասնությամբ: Ընկերության գիտական խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Ընկերության նախագահի կամ գիտական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով:

## Գ. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

3.12 Ընկերության նախագահը ԵՊՀ ԻՄ տնօրենի ներկայացմամբ հաստատվում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կողմից:

3.13 Նախագահի տեղակալին ու քարտուղարին մեկամսյա ժամանակահատվածում ԵՊՀ ԻՄ տնօրենի հաստատմանն է ներկայացնում Ընկերության նախագահը:

3.14 Ընկերության գիտական խորհրդի անդամներ են ֆակուլտետային ՈՒԳԸ նախագահները:

3.15 Ընկերության նախագահն ի պաշտոնե ներկայացնում է Ընկերությունը, համակարգում է գիտական խորհրդի գործունեությունը, ապահովում է Ընկերության կառուցվածքային միավորների համագործակցությունը, տալիս է լիազորագրեր, Ընկերության անունից կնքում պայմանագրեր ու համաձայնագրեր:

3.16 Ընկերության նախագահը տարեկան հաշվետվությամբ հանդես է գալիս ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում:

3.17 Ընկերության նախագահի տեղակալը նախագահի բացակայության դեպքում ստանձնում է նրա լիազորությունները, համակարգում է քարտուղարի աշխատանքներն ու Ընկերության գիտական խորհրդի կողմից ստեղծված աշխատանքային կառուցվածքային միավորների գործունեությունը, հանդես է գալիս կատարած աշխատանքների մասին հաղորդմամբ:

3.18 Ընկերության քարտուղարը իրականացնում է ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ փաստաթղթաշրջանառությունը՝ առաջնորդվելով Ընկերության գիտական խորհրդի աշխատակարգով:

## 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Ընկերության ֆինանսական միջոցները գոյանում են ԵՊՀ ԻՄ հատկացումներից, հանգանակություններից, նվիրատվություններից, ՀՀ օրենսդրությամբ ու ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ

չարգելված այլ աղբյուրներից:

4.2 Ընկերությունը անվճար, համաձայն սահմանված կարգի, օգտվում է ԵՊՀ ԻՄ տարածքից, գույքային, տեխնիկական և այլ միջոցներից:

4.3 Ընկերության միջոցները օգտագործվում են կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացման համար:

## 5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Ընկերությունն իր գործունեությունը դադարեցնում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի որոշմամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2 Ընկերության լուծարումից հետո նրա ամբողջ գույքն ու միջոցները պատկանում են Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղին:

**Հավելված 2**

**Հաստատված է**
**ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի**
**2024թ. մայիսի 04-ի նիստի թիվ 73/2 որոշմամբ**
**ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան**

# ԿԱՐԳ

## «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի ընդունելության կարգն ու պայմանները:

2. Սույն կարգի իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության օրենքները, կառավարության որոշումները, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007թ. դեկտեմբերի 6-ի թիվ 1193-Ն հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», ԵՊՀ ԻՄ կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

3. Մագիստրոսական կրթական ծրագիրը իրականացվում է, եթե առաջին կուրս ընդունված ուսանողների թիվը 10-ից պակաս չէ:

4. Մագիստրատուրայի ընդունելության համար պահանջվող ատեստավորման գնահատականի և դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականի (այսուհետ՝ ՄՈԳ) նվազագույն շեմը յուրաքանչյուր տարի սահմանվում է ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով:

### 2. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. Հեռակա ուսուցման ձևով, մրցույթային կարգով ԵՊՀ ԻՄ մագիստրատուրա կարող են ընդունվել Հայաստանի Հանրապետության պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման ձևերի բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները:

6. Հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայում կրթությունը կազմակերպվում է միայն վճարովի հիմունքներով՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

7. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով ԵՊՀ ԻՄ տնօրենի ղեկավարությամբ ձևավորվում է ընդունող հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ԵՊՀ ԻՄ-ի փոխտնօրենը, ուսումնամեթոդական վարչության պետը և մագիստրոսական կրթական ծրագիրը համակարգող տեսուչը:

8. Մագիստրատուրայի ընդունելության հայտերն ուսումնասիրելու, քննությունների արդյունքներն ամփոփելու և դիմորդների ընդունելության վերաբերյալ եզրակացություն տալու

նպատակով ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով ձևավորվում է մանդատային հանձնաժողով ԵՊՀ ԻՄ փոխտնօրենի նախագահությամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ՌՈՒՄԿ պետը, ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժնի վարիչը և մագիստրոսական ծրագրեր իրականացնող ֆակուլտետների դեկանները:

9. Ընդունելության քննության անցկացման նպատակով ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով ամեն մի ծրագրի համար ձևավորվում է առարկայական քննական հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են տվյալ ֆակուլտետի դեկանը, մագիստրոսական համապատասխան կրթական ծրագրի ղեկավարը և ընդունող հանձնաժողովի ներկայացուցիչը (ըստ անհրաժեշտության):

10. Օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը կատարվում է՝

ա) սույն կարգով սահմանված ընդհանուր հիմունքներով,

բ) հարցազրույցով՝ համաձայն ՀՀ Կառավարության 2011թ. ապրիլի 28-ի թիվ 700-Ն որոշմամբ սահմանված կարգով:

11. Հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի ընդունելության փաստաթղթերն ընդունվելու են առցանց՝ akiaib@ysu.am էլեկտրոնային հասցեով ընթացիկ տարվա սեպտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի 5-ը՝ մինչև ժամը 18:00: Ընդունելության քննություններն անցկացվելու են ընթացիկ տարվա հոկտեմբերի 10-ից 15-ը ընկած ժամանակահատվածում :

12. «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրով հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի ընդունելության մրցույթին հարցազրույցով առանց ընդունելության քննության կարող են մասնակցել ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով սահմանված ատեստավորման գնահատականի և ՄՈԳ-ի նվազագույն շեմը հաղթահարած.

12.1 «Գործարարություն և վարչարարություն» մասնագիտական ուղղության և

«Տնտեսագիտություն» մասնագիտության ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով հաստատված կրթական ծրագրերի ԵՊՀ ԻՄ և այլ բուհերի բակալավրի առկա և հեռակա ուսուցման ձևերի վերջին երեք տարվա շրջանավարտները,

12.2 ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած և վերջին երեք տարվա ընթացքում զորացրված «Գործարարություն և վարչարարություն» մասնագիտական ուղղության և «Տնտեսագիտություն» մասնագիտության ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով հաստատված կրթական ծրագրերի ԵՊՀ ԻՄ և այլ բուհերի բակալավրի առկա և հեռակա ուսուցման ձևերի շրջանավարտները:

13. «Գործարարություն և վարչարարություն» մասնագիտական ուղղության և

«Տնտեսագիտություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի և այլ ծրագրերի շրջանավարտների համար, ովքեր չեն հաղթահարել ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով սահմանված ատեստավորման գնահատականի և ՄՈԳ-ի նվազագույն շեմը, ինչպես նաև ՀՀ Ազգային բանակում ծառայած և երեք տարուց ավելի վաղ զորացրված դիմորդների համար, ընդունելությունը կատարվում է «Կառավարում /ըստ ոլորտի/» բակալավրի
կրթական ծրագրի վերջնարդյունքներին համապատասխան հարցաշարով անցկացված քննության արդյունքների հիման վրա՝ մրցութային կարգով:

14.«Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի ընդունելության մրցույթին հարցազրույցով առանց ընդունելության քննության կարող են մասնակցել.

14.1 ԵՊՀ ԻՄ-ի առկա և հեռակա ուսուցման ձևերի վերջին երեք ուսումնական տարվա (տարին հաշվվում է՝ սկսած գործող ուսումնական տարվանից) կամայական մասնագիտության

բակալավրի կրթական ծրագրի այն շրջանավարտները, ովքեր ստացել են մանկավարժի լրացուցիչ որակավորում և հաղթահարել են ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով սահմանված ատեստավորման գնահատականի և ՄՈԳ-ի նվազագույն շեմը:

14.2 ԵՊՀ ԻՄ-ի մյուս տարիների կամայական մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի այն շրջանավարտները, ովքեր ստացել են մանկավարժի որակավորում և հաղթահարել են ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով սահմանված ատեստավորման գնահատականի և ՄՈԳ-ի նվազագույն շեմը:

14.3 այլ բուհերի «Նախադպրոցական մանկավարժություն», «Ընդհանուր մանկավարժություն» և «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտությունների բակալավրի առկա և հեռակա ուսուցման ձևերի վերջին երեք տարվա շրջանավարտները, ովքեր հաղթահարել են ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով սահմանված ատեստավորման գնահատականի և ՄՈԳ-ի նվազագույն շեմը:

14.4 դպրոցների այն ուսուցիչները, ովքեր ունեն առնվազն 5 տարվա անկավարժական փորձ,

14.5 ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած և վերջին երեք տարվա ընթացքում զորացրված սույն կարգի 12.3 կետում նշված մասնագիտությունների դիմորդները:

15. «Նախադպրոցական մանկավարժություն», «Ընդհանուր մանկավարժություն» և «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտությունների բակալավրի կրթական ծրագրի և այլ ծրագրերի շրջանավարտների, ովքեր չեն հաղթահարել ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով սահմանված ատեստավորման գնահատականի և ՄՈԳ-ի նվազագույն շեմը, ինչպես նաև ՀՀ Ազգային բանակում ծառայած և երեք տարուց ավելի վաղ զորացրված դիմորդների համար, ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ «Ընդհանուր մանկավարժություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի վերջնարդյունքներին համապատասխան հարցաշարով անցկացված քննության արդյունքների հիման վրա:

16. Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով առարկայական քննական հանձնաժողովի և մանդատային հանձնաժողովի ներկայացրած արձանագրությունները:

17. Մագիստրատուրա ընդունված դիմորդները պարտավոր են մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 22-ը վճարել ուսման վարձավճարը (1-ին կիսամյակի համար նախատեսված ուսման վարձի առնվազն 25%-ը), որից հետո կատարվում է նրանց հրամանագրումը:

## 3. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

18. Մագիստրատուրայի ընդունելության համար դիմորդները պետք է սքանավորեն և akiaib@ysu.am էլեկտրոնային հասցեին ուղարկեն հետևյալ փաստաթղթերը՝

ա) մագիստրատուրայի ընդունելության լրացված դիմում-հայտ,

բ) բարձրագույն կրթության դիպլոմի և հավելվածի բնօրինակները, (ԵՊՀ ընթացիկ տարվա շրջանավարտները (դեռևս դիպլոմ չստացած) ներկայացնում են ակադեմիական տեղեկագիր՝ կնքված և ստորագրված ֆակուլտետի կողմից, իսկ ՀՀ այլ ԲՈՒՀ-երի ընթացիկ տարվա շրջանավարտները (դեռևս դիպլոմ չստացած)՝ տվյալ ԲՈՒՀ-ի ռեկտորի ստորագրությամբ

տեղեկանք բակալավրիատի շրջանավարտ լինելու մասին և ակադեմիական տեղեկագիր՝ կնքված և ստորագրված),

գ) արտասահմանյան ԲՈՒՀ-ի դիպլոմ ներկայացնելու դեպքում դիպլոմի հետ պետք է ներկայացնել նաև «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից» տեղեկանք՝ դիպլոմի համարժեքության մասին,

դ) 2 լուսանկար (3x4 չափսի),

ե) զինվորական գրքույկի (առկայության դեպքում) բնօրինակը (1-7-րդ և 18-19-րդ էջերը),

զ) աձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակը,

է)ընդունելության ծառայությունների համար գանձվող 3000 ՀՀ դրամի վճարման անդորրագիրը:

19. Ընդունելության հրամանը ստանալուց հետո ՈՒՄՎ մագիստրոսական կրթական ծրագրերը համակրգող տեսուչը հավաքագրում է ուսանողի առցանց ներկայացրած փաստաթղթերը և կազմում է ուսանողի անձնական գործը: Անհրաժեշտության դեպքում տեսուչը ուսանողից կարող է պահանջել սքանավորած փաստաթղթերի բնօրինակներն ու պատճենները:

Հավելված 3

Հաստատված է
ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի
2024թ. մայիսի 04-ի նիստի թիվ 73/3 որոշմամբ
ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան

# «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) ներքին կարգապահական կանոնները (այսուհետ՝ կանոններ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան սահմանում են ԵՊՀ ԻՄ-ում աշխատանքի ընդունման և ազատման կարգը, աշխատողների ու սովորողների հիմնական իրավունքները, պարտականությունները, աշխատանքի ռեժիմը, հանգստի ժամանակը, աշխատողների ու սովորողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցները, աշխատողների օրական կամ շաբաթական աշխատաժամանակի հաշվառմանը, աշխատանքում (աշխատավայրում) բռնության կամ սեռական ոտնձգության արգելքին, աշխատանքային հարաբերություններին և ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր:

2. Սույն կանոնները տարածվում են ԵՊՀ ԻՄ աշխատողների ու սովորողների, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ տարածքում գտնվող այն անձանց վրա, որոնք ԵՊՀ ԻՄ հետ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ են, օգտվում են ԵՊՀ ԻՄ ծառայություններից կամ աշխատանքներից, համագործակցում են ԵՊՀ ԻՄ կամ նրա կառուցվածքային ստորաբաժանումների հետ կամ այլ նպատակներով ժամանակավորապես գտնվում են ԵՊՀ ԻՄ-ում:

3. Աշխատանքի ընդունելու, աշխատողին խրախուսելու ու կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կանոնները ԵՊՀ ԻՄ տնօրենի վրա չեն տարածվում:

4. ԵՊՀ ԻՄ-ում գործում է աշխատողների, գործընկերների, թափուր պաշտոնների հավակնորդների հետ հարաբերություններում շահերի հնարավոր բախման բացահայտման ու դրա սահմանափակման ընթացակարգ:

5. ԵՊՀ ԻՄ-ում ՀՀ դրոշի գործածումն իրականացվում է «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին՝ ՀՀ օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ:

6. ԵՊՀ ԻՄ-ում պետք է ապահովվեն անվտանգ միջավայր ու աշխատանքային բավարար պայմաններ (գույքի, ուսումնական սարքավորումների առկայություն, նորմալ ջերմաստիճանի ու լուսավորության ապահովում և այլն), որի պատասխանատուն փոխտնօրենն է, պարետներն ու կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներն են:

7. ԵՊՀ ԻՄ-ում արգելվում է բռնությունը՝ իր բոլոր դրսևորումներով:

8. ԵՊՀ ԻՄ-ում արգելվում են ծխելը (բացառությամբ դրա համար առանձնացված հատուկ տարածքներում), ալկոհոլային խմիչքների օգտագործումը, թղթախաղերը ու մոլեխաղերը:

## 2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԱԶԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

9. ԵՊՀ ԻՄ-ում աշխատանքի ընդունումն ու ազատումը կատարվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությանը, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ ԵՊՀ ԻՄ կոլեկտիվ պայմանագրին համապատասխան։

10. Աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները ծագում են ԵՊՀ ԻՄ տնօրենի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու կամ տնօրենի կողմից օրենքով սահմանված կարգով աշխատանքի ընդունման անհատական իրավական ակտ ընդունելու միջոցով։

11. Հանրային պաշտոններ ու հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք ԵՊՀ ԻՄ-ում կարող են համատեղությամբ աշխատանք կատարել նաև իրենց հիմնական աշխատանքի աշխատանքային ժամերի ընթացքում:

12. Աշխատանքի ընդունման ժամանակ աշխատողն անձնակազմի կառավարման ստորաբաժանում է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) անձը հաստատող փաստաթուղթ,

2) սոցիալական ապահովության քարտ (կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանք) կամ հանրային ծառայության համարանիշ (կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանք), բացառությամբ եթե աշխատանքի ընդունվողը ՀՀ-ում կացության կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ և փաստացի չի գտնվելու ՀՀ-ում,

3) կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին վկայական, եթե օրենսդրությանը համապատասխան՝ աշխատանքն առնչվում է որոշակի կրթության կամ մասնագիտական պատրաստվածության հետ,

4) տեղեկանք առողջական վիճակի մասին, եթե աշխատանքային պայմանագիրը կնքվում է այնպիսի աշխատանքների (ցանկը սահմանում է ՀՀ Կառավարությունը) համար, որոնք պահանջում են նախնական ու պարբերական բժշկական զննություն, ինչպես նաև մինչև տասնութ տարեկան քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագիր կնքելու ժամանակ,

5) մինչև տասնվեց տարեկան անձին աշխատանքի ընդունելիս՝ ծնողներից (կամ խնամատար ծնողներից, որդեգրողներից մեկի, խնամակալի, հոգաբարձուի), իսկ նրանց բացակայության դեպքում՝ մինչև տասնվեց տարեկան անձի բնակության վայրի խնամակալության ու հոգաբարձության մարմնի գրավոր համաձայնությունը,

6) օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված այլ փաստաթղթեր:

13. ԵՊՀ ԻՄ աշխատողները բաժանվում են գիտամանկավարժական (պրոֆեսորադասախոսական կազմը, գիտական աշխատողները), ինժեներատեխնիկական, վարչական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ տարակարգերի։

14. Պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների համալրումը կատարվում է բաց մրցութային ընտրության միջոցով, որի կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ և ԵՊՀ ԻՄ պրոֆեսոր-ադասախոսական կազմի թափուր պաշտոնի համալրման կարգով։

15. Աշխատանքի ընդունվող անձը պետք է անցնի անվտանգության տեխնիկայի,

սանիտարական, հակահրդեհային նորմերի ու կանոնների պահպանման հրահանգավորում և ծանոթանա իր կողմից կատարվելիք աշխատանքի պայմաններին, ԵՊՀ ԻՄ կոլեկտիվ պայմանագրին, սույն կանոններին, աշխատանքի նկարագրությանը (պաշտոնի անձնագրին)։

Աշխատանքի պայմաններին ծանոթացնում ու անվտանգության տեխնիկայի, սանիտարական, հակահրդեհային կանոնների պահպանման հրահանգավորումը կատարում է ԵՊՀ ԻՄ աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման պատասխանատուն։

Սույն կանոններին, ԵՊՀ ԻՄ կոլեկտիվ պայմանագրին, աշխատանքի նկարագրությանը (պաշտոնի անձնագրին) և աշխատանքային հարաբերություններին առնչվող ներքին իրավական այլ ակտերին ծանոթացնում է ԵՊՀ ԻՄ անձնակազմի կառավարման բաժինը։

16. Աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները դադարում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերով և կարգով՝ աշխատանքային պայմանագրի լուծման (աշխատանքային հարաբերությունների դադարեցման) միջոցով։

## 3.ԵՊՀ ԻՄ ՂԵԿԱՎԱՐ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. ԵՊՀ ԻՄ տնօրենի, ղեկավար պաշտոնատար անձանց իրավունքներն ու պարտականությունները, իրավասության շրջանակը սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով։

18. ԵՊՀ ԻՄ ղեկավար անձնակազմը պարտավոր է.

1) ապահովել աշխատողների բնականոն աշխատանքը,

2) կատարել ուսումնական գործընթացի մեթոդական ապահովումը, հաստատել ուսումնական աշխատանքների ծավալը,

3) ապահովել տարածքների բարեկարգ վիճակը, ջեռուցումը, լուսավորումը, օդափոխությունը, կահավորումը և անվտանգ միջավայրը,

4) սահմանված ժամկետներում վճարել աշխատողների աշխատավարձը և սովորողների կրթաթոշակը,

5) հաստատել արձակուրդի տրամադրման ժամանակացույցը,

6) ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացումը,

7) նպաստել կոլեկտիվում գործնական, ստեղծագործական մթնոլորտի ապահովմանը, քննարկել ԵՊՀ ԻՄ գործունեության բարելավմանն ուղղված աշխատողների և սովորողների առաջարկությունները,

8) կատարել կոլեկտիվ պայմանագրի պահանջները,

9) պահպանել աշխատանքային օրենսդրությունը և աշխատանքի պաշտպանության կանոնները (տեխնիկայի անվտանգության կանոններ, սանիտարական նորմեր ու կանոններ և այլն),

10) ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով հաստատել բժշկական զննության ենթակա աշխատողների ցանկը, բժշկական զննություն անցնելու ժամանակացույցը և այդ մասին ծանուցել աշխատողներին,

11) կատարել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ պարտականություններ։

## 4. ԱՇԽԱՏՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ

19. ԵՊՀ ԻՄ աշխատողն իրավունք ունի՝

1) ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ և կոլեկտիվ պայմանագրով սահմանված կարգով ընտրելու և ընտրվելու ԵՊՀ ԻՄ պաշտոններում ու կառավարման մարմիններում, ընդգրկվելու ու մասնակցելու դրանց աշխատանքներին,

2) մասնակցելու ԵՊՀ ԻՄ գործունեությանն առնչվող խնդիրների քննարկմանն ու լուծմանը,

3) ընտրելու ուսումնական գործընթացի դասավանդման մեթոդներ և գնահատման ձևաչափեր,

4) միավորվելու արհեստակցական կազմակերպություններում,

5) սահմանված կարգով օգտվելու գրադարանների, տեղեկատվական պահոցների, ուսումնական ու գիտական ստորաբաժանումների, ինչպես նաև սոցիալ-կենցաղային, բուժական ստորաբաժանումների, ուսումնաարտադրական և մարզաառողջարանային բազաների, կառուցվածքային այլ ստորաբաժանումների վճարովի ու անվճար ծառայություններից,

6) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու ԵՊՀ ԻՄ կառավարման մարմինների և ստորաբաժանումների ղեկավարների ընդունած ակտերը,

7) սահմանված կարգով ստանալու աշխատավարձ, պարգևատրումներ ու խրախուսանքներ (ներառյալ՝ դրամական),

8) մասնագիտական ու աշխատանքային գործունեության համար ունենալու կազմակերպական ու նյութատեխնիկական պայմաններ,

9) ըստ նախասիրությունների՝ կազմակերպելու և մասնակցելու ԵՊՀ ԻՄ-ում անցկացվող գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին ու գիտաժողովներին,

10) իրացնելու ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ,

20. ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմը, գիտական աշխատողներն ու սովորողներն օժտված են ակադեմիական ազատություններով:

21. ԵՊՀ ԻՄ աշխատողը պարտավոր է՝

1) պահպանել և կատարել ԵՊՀ ԻՄ կանոնադրության, սույն կանոնների, ԵՊՀ ԻՄ էթիկայի կանոնագրքի ու ներքին իրավական այլ ակտերի պահանջները,

2) պահպանել աշխատաժամանակի ռեժիմը, արդյունավետ ու աշխատանքի նկարագրին (պաշտոնի անձնագրին) համապատասխան օգտագործել աշխատաժամանակը,

3) կատարել ԵՊՀ ԻՄ ղեկավար մարմինների օրինական որոշումները,

4) ապահովել ուսումնական գործընթացի, անցկացվող գիտական հետազոտությունների արդյունավետությունը,

5) պահպանել ու արդյունավետ օգտագործել ԵՊՀ ԻՄ գույքը,

6) փոխհատուցել ԵՊՀ ԻՄ-ին պատճառված նյութական վնասը, որն առաջացել է՝

ա. ԵՊՀ ԻՄ գույքը փչացնելու կամ կորցնելու հետևանքով,

բ. նյութերի գերծախս թույլ տալու հետևանքով,

գ.աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունները կատարելիս այլ անձանց պատճառված վնասը գործատուի կողմից հատուցելու դեպքում,

դ. նյութական արժեքների ոչ պատշաճ պահպանության հետևանքով,

ե. նյութական կամ դրամական արժեքները հափշտակելու հետևանքով,

7) պարբերաբար բարձրացնել իր մասնագիտական որակավորումը, ներքին իրավական ակտերով սահմանված կարգով անցնել վերապատրաստում կամ որակավորման բարձրացում,

8) պահպանել աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին իրավական ակտերի, աշխատանքի կազմակերպման ու իրականացման կանոնների, հրահանգների պահանջները,

9) կատարել ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ, էթիկայի կանոնագրքով, ներքին կարգապահական կանոններով և ներքին իրավական այլ ակտերով նախատեսված պարտականությունները:

## 5. ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ

22. Աշխատաժամանակն այն ժամանակահատվածն է, որի ընթացքում աշխատողը պարտավոր է կատարել աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքը, ինչպես նաև դրան հավասարեցված այլ ժամանակահատվածներ:

23. ԵՊՀ ԻՄ-ում աշխատանքները կազմակերպվում են շաբաթվա երեքշաբթիից շաբաթ օրերին՝ ժամը 9.00-19.00-ն ընկած ժամանակահատվածում:

Որոշ դեպքերում լսարանային ֆոնդի անբավարարության, դասախոսների, դասավանդողների զբաղվածության պատճառով ուսումնական պարապմունքների անցկացումը թույլատրվում է նաև կիրակի օրերին՝ ըստ նախապես հաստատված դասացուցակի:

Տոնական ու հանգստյան օրերին աշխատանքը թույլատրվում է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

24. ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի (ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ ու դասախոս) և գիտական աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ երեսուն ժամ ընդհանուր տևողությամբ:

ԵՊՀ ԻՄ մյուս աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ երեսունվեց ժամ ընդհանուր տևողությամբ:

25. ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի և գիտական աշխատողների աշխատաժամանակը սահմանվում է 9.00-19.00-ն ընկած ժամանակահատվածում՝ պահպանելով օրվա ծանրաբեռնվածությունը:

ԵՊՀ ԻՄ մյուս աշխատողների աշխատանքային օրվա սկիզբը երեքշաբթիից ուրբաթ օրերին սահմանվում է 9.00-ին, ավարտը՝ 16.45-ին, իսկ շաբաթ օրվա սկիզբը սահմանվում է 9.00-ին, ավարտը՝ 16.30-ին: Ընդմիջումը սահմանվում է 13.00-13.30-ն ընկած ժամանակահատվածում: Աշխատանքի բնույթից ելնելով՝ յուրաքանչյուր ստորաբաժանում տնօրենի թույլտվությամբ կարող է փոփոխել ընդմիջման ժամը:

Լրացուցիչ ու հատուկ ընդմիջումները տրամադրվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերում աշխատանքի ժամանակացույցով:

Աշխատանքային անհրաժեշտությամբ պայմանավորված՝ յուրաքանչյուր ստորաբաժանում, տնօրենի թույլտվությամբ կարող է փոփոխել իր ստորաբաժանման աշխատանքային ժամերը 9.00-19.00-ն ընկած ժամանակահատվածում՝ պահպանելով օրվա ծանրաբեռնվածությունը:

26. Ոչ աշխատանքային՝ տոնական ու հիշատակի օրերի նախօրյակին աշխատանքային օրվա տևողությունը կրճատվում է մեկ ժամով՝ բացառությամբ կրճատ աշխատանքային ժամանակի պայմաններով աշխատող աշխատողների:

Ոչ աշխատանքային ու հանգստյան օրերին, ինչպես նաև արտակարգ պայմաններում ԵՊՀ ԻՄ-ում կարող է սահմանվել աշխատանքի հատուկ ռեժիմ:

27. Տնօրենի հրամանով աշխատաժամանակի կրճատ տևողություն սահմանվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերում:

28. Արտաժամյա աշխատանքներում աշխատողի ներգրավումը թույլատրվում է միայն ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով:

Արտաժամյա չի համարվում տնօրենի, փոխտնօրենի ու կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի՝ սահմանված աշխատաժամանակը գերազանցող աշխատանքը:

29. Գործատուի ու աշխատողի փոխադարձ համաձայնությամբ աշխատանքային պարտականությունները կարող են կատարվել նաև առանց աշխատանքի վայր ներկայանալու՝ հեռավար, եթե աշխատանքի բնույթը թույլ է տալիս:

Տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում, երբ, այդ դեպքերով պայմանավորված, հնարավոր չէ ապահովել աշխատողի կողմից իր աշխատանքային պարտականությունների կատարումն աշխատանքի վայրում, ապա աշխատանքը կատարվում է հեռավար:

Հեռավար աշխատանքը կազմակերպվում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տնօրենի հրամանով: Հեռավար աշխատանքի վարձատրությունը կատարվում է աշխատողի ամսական դրույքաչափին համապատասխան չափով:

30. ԵՊՀ ԻՄ-ը պարտավոր է սահմանված կարգով վարել յուրաքանչյուր աշխատողի աշխատաժամանակի հաշվառումը:

## 6. ՀԱՆԳՍՏԻ ԺԱՄԱՆԱԿԸ

31. Հանգստի ժամանակը օրենքով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով կանոնակարգված աշխատանքից ազատ ժամանակն է, որն աշխատողն օգտագործում է իր հայեցողությամբ:

32. Ամենամյա նվազագույն հանգստի տևողությունը հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում քսան աշխատանքային օր է:

33. Տնօրենին, փոխտնօրենին, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, տրամադրվում է ամենամյա երկարացված արձակուրդ՝ քսանհինգ աշխատանքային օր՝ ընդհանուր տևողությամբ, իսկ պրոֆեսորադասախոսական կազմին, երեսունհինգ աշխատանքային օր՝ ընդհանուր տևողությամբ:

Որոշ աշխատողների՝ (ցանկը սահմանում է ՀՀ Կառավարությունը) տնօրենի հրամա-

նով տրամադրվում է ամենամյա լրացուցիչ արձակուրդ։

34. Աշխատողներին ամենամյա արձակուրդի տրամադրման տարեկան ժամանակացույցը հաստատվում է տնօրենի հրամանով՝ հաշվի առնելով ԵՊՀ ԻՄ աշխատանքի նորմալ ընթացքի ու աշխատողների հանգստի բարենպաստ պայմանների ապահովումը։

Պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողներին, ամենամյա արձակուրդը (կամ դրա մի մասը), որպես կանոն, տրամադրվում է սովորողների ամառային արձակուրդների ժամանակահատվածում։

## 7. ԱՇԽԱՏՈՂԻՆ ԽՐԱԽՈՒՄԵԼԸ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼԸ

35. Աշխատանքային պարտականությունների բարեխիղճ կատարման, աշխատանքի արդյունավետության բարձրացման, անբասիր աշխատանքի, աշխատանքում նորամուծությունների և այլ ձեռքբերումների, գիտահետազոտական ու հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար աշխատողների համար սահմանվում են հետևյալ խրախուսանքները՝

1) պատվավոր կոչման կամ պարգևի շնորհում,
2) միանվագ դրամական պարգևատրում,
3) պատվոգրի, շնորհակալագրի, մեդալի հանձնում,
4) հուշանվերով պարգևատրում,
5) կարգապահական տույժի հանում,
6) լրացուցիչ վճարովի արձակուրդի (day-off) տրամադրում։

Երկարամյա աշխատանքի, գիտության ու կրթության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար աշխատողը կարող է ներկայացվել ԵՊՀ, պետական կամ գերատեսչական պարգևով կամ կոչումով պարգևատրման։

36. Աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի կողմից կամ նրա մեղքով ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ, սույն կանոններով և ներքին իրավական ակտերով նախատեսված աշխատանքային պարտականությունները կամ կանոնները չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ այլ կերպ խախտելը։

37. Աշխատանքային կարգապահության խախտման համար ԵՊՀ ԻՄ տնօրենը կարող է կիրառել կարգապահական հետևյալ տույժերը՝

1) նկատողություն,
2) խիստ նկատողություն,
3) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ, 13-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում։

38. Մինչև կարգապահական տույժի կիրառումը աշխատողից պետք է գրավոր կերպով պահանջել գրավոր բացատրություն՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ։ Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց գրավոր բացատրության։ Սահմանված ժամկետում աշխատողի կողմից բացատրություն չներկայացնելը պետք է հաստատվի համապատասխան ակտով։

39. Կարգապահական տույժը կարող է կիրառվել խախտումը հայտնաբերելուց հետո՝

մեկ ամսվա ընթացքում՝ չհաշված աշխատողի ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայության, գործուղման կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածները։

Կարգապահական տույժը չի կարող կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է վեց ամիս։ Եթե խախտումը հայտնաբերվում է աուդիտի, ֆինանսատնտեսական գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգման (գույքագրման) ընթացքում, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է ոչ ավելի, քան մեկ տարի։

40. Աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ։ Կիրառված կարգապահական տույժի մասին աշխատողը տեղեկացվում է սահմանված կարգով։

41. Եթե կարգապահական տույժի ենթարկվելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, աշխատողը չի ենթարկվել կարգապահական նոր տույժի, ապա այն համարվում է մարված։

## 8. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

42. Ուսումնական տարին բաղկացած է երկու կիսամյակներից և սկսվում ու ավարտվում է համաձայն ուսումնական պլանի։

43. Դասացուցակը հաստատվում է փոխտնօրենի կողմից և դասերն սկսելուց առնվազն յոթ օր առաջ առաքվում է սովորողի համալսարանական էլեկտրոնային փոստին։

Ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ժամը 9:15-19:00-ի սահմաններում։

Դասացուցակի պահպանումն ու դասախոսի անհատական ուսումնական բեռնվածության կատարումը վերահսկում են Ուսումնամեթոդական վարչությունն ու փոխտնօրենը։

44. Լսարանային պարապմունքը բաղկացած է երկու ակադեմիական ժամից՝ մեկ ակադեմիական ժամը 40 րոպե է։ Ակադեմիական ժամի ավարտից հետո դասամիջոցը 5–10 րոպե է, իսկ պարապմունքների միջև դասամիջոցը՝ 10-30 րոպե։

45. Պարապմունքների սկսվելուց հետո բոլոր ուսումնական մասնաշենքերում պետք է ապահովվեն լռություն ու կարգապահություն։

Արգելվում է ընդհատել կամ խանգարել պարապմունքները, դրանց անցկացման ժամանակ աղմկել միջանցքներում, մտնել լսարան կամ դուրս գալ լսարանից։

Դասաժամի ընթացքում արգելվում է տվյալ դասին չառնչվող նպատակով ժամանակակից կապի միջոցների կամ այլ նյութերի օգտագործումը։

46. Տնօրենի (նրա լիազորմամբ նաև փոխտնօրենի) և աշխատողի փոխադարձ համաձայնությամբ ուսումնական գործընթացը (եթե բնույթը թույլ է տալիս) կարող է կազմակերպվել նաև առանց աշխատանքի վայր ներկայանալու՝ հեռավար։

Տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների ու արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում, երբ, այդ դեպքերով պայմանավորված, հնարավոր չէ ուսումնական գործընթացը կազմակերպել առկա ձևաչափով, ուսումնական գործընթացն իրականացվում է հեռավար։

Ուսումնական գործընթացի հեռավար կազմակերպման կարգը սահմանվում է

տնօրենի հրամանով:

47. Քննության կամ ստուգարքի ժամանակ դասախոսի պահանջով կարող է արգելվել կապի, հեռահաղորդակցության կամ տեխնիկական այլ միջոցների առկայությունը կամ կիրառումը:

## 9. ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

48. ԵՊՀ ԻՄ սովորողն իրավունք ունի.

1) սեփական հայեցողությամբ ընտրելու մասնագիտությունը, ուսուցման ձևը, զբաղվելու հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու բարձրագույն ու հետբուհական մասնագիտական կրթությունը,

2) ստանալու կրթության, գիտության, տեխնիկայի և մշակույթի ժամանակակից մակարդակին համապատասխանող գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ, հաճախելու ԵՊՀ ԻՄ-ում կարդացվող դասախոսություններին,

3) մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական պահանջները,

4) մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին, գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը,

5) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից՝ յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է ԵՊՀ ԻՄ-ում՝ ըստ սահմանված կարգի,

6) ընտրելու բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի տարբեր ձևերով ուսուցում՝ առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն),

7) ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ընդգրկվելու ու մասնակցելու ԵՊՀ ԻՄ կառավարման մարմինների աշխատանքներին,

8) սահմանված կարգով օգտվելու ԵՊՀ ԻՄ գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական, առողջարանային, ուսումնաարտադրական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,

9) ըստ նախասիրությունների՝ մասնակցելու ԵՊՀ ԻՄ-ում անցկացվող ուսանողական, գիտահետազոտական, նորարարական աշխատանքներին, սեմինարներին ու գիտաժողովներին,

10) միավորվելու ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում ու ուսանողական այլ կազմակերպություններում,

11) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու ԵՊՀ ԻՄ ղեկավարության ընդունած ակտերը,

12) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվելու ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի կամ լրիվ փոխհատուցման իրավունքից,

13) ՀՀ օրենսդրությամբ ու ԵՊՀ ԻՄ կողմից սահմանված կարգով ստանալու կրթաթոշակ (ներառյալ՝ անվանական),

14) ծանոթանալու ԵՊՀ ԻՄ կանոնադրությանն ու իրավական այլ ակտերին,

15) սահմանված կարգով ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,

16) ուսուցման առկա ձևով ուսումնառության դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում առնվազն երկու անգամ գտնվելու արձակուրդում՝ առնվազն յոթ շաբաթ ընդհանուր տևողությամբ,

17)սահմանված կարգով բնակվելու հանրակացարանում,

18) փոխադրվելու բարձրագույն ուսումնական այլ հաստատություն (ներառյալ՝ օտարերկրյա)։

49. Կրթությունն ընդհատած նախկին սովորողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի վերականգնվելու ԵՊՀ ԻՄ-ում։

50. Արգելվում է սովորողին արտաուսումնական աշխատանքում ներգրավելը առանց նրա և (կամ) նրա օրինական ներկայացուցչի համաձայնության։

51. ԵՊՀ ԻՄ սովորողը պարտավոր է՝

1) սահմանված ժամկետում կատարել ուսումնական առաջադրանքները,

2) տիրապետել բարձր որակավորում ունեցող մասնագետի համար անհրաժեշտ գիտելիքներին, հմտություններին ու կարողություններին,

3) կատարել ԵՊՀ ԻՄ կանոնադրության, սույն կանոնների և ներքին իրավական այլ ակտերի պահանջները,

4) հաճախել ուսումնական ծրագրերով նախատեսված դասընթացներին.

Հարգելի պատճառով պարապմունքներին չներկայանալու դեպքում սովորողը պարտավոր է նույն օրն այդ մասին տեղյակ պահել ֆակուլտետի դեկանատին, իսկ մասնաճյուղ ներկայանալու առաջին իսկ օրը տվյալներ ներկայացնել պարապմունքներին չներկայանալու պատճառների մասին։

Հիվանդության դեպքում սովորողը ֆակուլտետի դեկանին ներկայացնում է ժամանակավոր անաշխատունակության մասին համապատասխան փաստաթուղթ՝ սահմանված կարգի համաձայն։

5) չվնասել ԵՊՀ ԻՄ գույքը,

6) պահպանել համակեցության, բարոյականության, էթիկայի, ակադեմիական ազնվության և բարեվարքության նորմերը, ԵՊՀ ԻՄ տարածքում ավտոտրանսպորտային միջոցի տեղաշարժման կարգը,

7) սահմանված ժամկետում վճարել ուսման վճարը,

8) կատարել ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ, էթիկայի կանոնագրքով, սույն կանոններով, ներքին իրավական այլ ակտերով և ուսումնառության պայմանների վերաբերյալ կնքված պայմանագրով նախատեսված պարտականությունները։

## 10. ՍՈՎՈՐՈՂԻՆ ԽՐԱԽՈՒՄԵԼԸ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼԸ

52. Ուսումնական հաջողությունների, գիտահետազոտական ու հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար սովորողը կարող է խրախուսվել ԵՊՀ ԻՄ ներքին իրավական ակտերով սահմանված կարգով։

53. Այն սովորողը, որը չի կատարում ուսումնական պլաններն ու ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ցուցաբերում է ակադեմիական անբավարար առաջա-

դիմություն, խախտում է ՀՀ օրենսդրության, ԵՊՀ ԻՄ կանոնադրության, ԵՊՀ ԻՄ ներքին իրավական ակտերի, սույն կանոնների պահանջները, տնօրենի կամ նրա կողմից լիազորված անձի հրամանով կարող է ենթարկվել կարգապահական տույժի՝ ընդհուպ մինչև ԵՊՀ ԻՄ-ից հեռացվելը։

54. Սովորողի կողմից ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ, սույն կանոնների նախատեսված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, ներքին կարգապահության կանոնների խախտման դեպքում նրա նկատմամբ կիրառելի են կարգապահական հետևյալ տույժերը՝

1) նկատողություն,

2) խիստ նկատողություն,

3) հեռացում համալսարանից։

55. Մինչև կարգապահական տույժի կիրառումը սովորողից պետք է պահանջել գրավոր բացատրություն։ Սահմանված ժամկետում սովորողի կողմից բացատրություն չներկայացնելը պետք է հաստատվի համապատասխան ակտով։

56. Կարգապահական տույժը կարող է կիրառվել արարքի բացահայտումից ոչ ուշ, քան մեկ ամսվա և կատարումից ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում՝ չհաշված սովորողի հիվանդության կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածը։ Կիրառված կարգապահական տույժի մասին սովորողը տեղեկացվում է։

57. Եթե կարգապահական տույժի ենթարկվելու օրվանից հետո՝ մեկ ուսումնական տարվա ընթացքում, սովորողը չի ենթարկվել կարգապահական նոր տույժի, ապա դա համարվում է մարված։

58. Ուսումնական կիսամյակի ընթացքում դասերից 40 /քառասուն/ ակադեմիական ժամից (հեռակա ուսումնառության համակարգի դեպքում՝ քսան /20/ ակադեմիական ժամից) ավելի անհարգելի բացակայության դեպքում կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի կողմից տվյալ սովորողին հայտարարվում է նկատողություն։

59. Ուսումնական կիսամյակի ընթացքում դասերից 60 /վաթսուն/ ակադեմիական ժամից (հեռակա ուսումնառության համակարգի դեպքում՝ 30 /երեսուն/ ակադեմիական ժամից) ավելի անհարգելի բացակայության դեպքում տնօրենի կողմից տվյալ սովորողին հայտարարվում է խիստ նկատողություն։

60. Սովորողը կարող է հեռացվել (ազատվել) ԵՊՀ ԻՄ-ից՝

1) իր դիմումի համաձայն,

2) ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով,

3) այլ բուհ տեղափոխվելու դեպքում,

4) դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտվելու դեպքում,

5) ուսումնական կիսամյակի ընթացքում դասերից 80 /ութսուն/ ակադեմիական ժամ (հեռակա ուսումնառության համակարգի դեպքում՝ 40 /քառասուն/ ակադեմիական ժամ) անհարգելի բացակայության պատճառով,

6) տվյալ ուսումնական տարվա (կիսամյակի) ուսման վճարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում,

7) ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոնները կոպիտ կերպով խախտելու դեպքում, ինչպես նաև մեկ ուսումնական տարվա ընթացքում երկու ու ավելի անգամ

կարգապահական տույժի ենթարկվելու դեպքում,

8) գրագողության, արտագրության (փորձի) կամ ակադեմիական ազնվության վարքականոնների խախտման այլ դեպքերում,

9) ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ, սույն կանոններով, ուսանողի հետ կնքված ուսումնառության պայմանների վերաբերյալ պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում,

10) ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ, սույն կանոններով և ներքին իրավական ակտերով նախատեսված այլ դեպքերում։

61. Արգելվում է սովորողին հեռացնել հիվանդության, արձակուրդի, ակադեմիական արձակուրդի կամ հղիության ու ծննդաբերության արձակուրդի ընթացքում։

## 11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

62. Սույն կանոնները հաստատվում, դրանում փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կողմից։

63. Սույն կանոնները հրապարակվում են ԵՊՀ ԻՄ պաշտոնական կայքէջում և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից։

64. Սույն կանոնների մասին իրազեկվում է ԵՊՀ ԻՄ կոլեկտիվը։

**Հավելված 4**

**2023-24 ուստարվա ավարտական կուրսերի մասնագիտական պրակտիկաների կազմակերպումից և իրականացումից ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողների բավարարվածության ուսումնասիրության արդյունքների**
**ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Պրակտիկան ուսման կազմակերպիչների, ապագա շրջանավարտների ու գործատուների շահերի խաչման յուրատեսակ կիզակետ է: Պրակտիկաներն անփոխարինելի հնարավորություն են ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքների փորձարկման, մասնագիտական հմտությունների ստուգման, դրանք կատարելագործելու տեսանկյունից:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի համար պրակտիկաների արդյունավետ կազմակերպումը ռազմավարական առաջնահերթ խնդիրներից է: Դրանց ճիշտ և բովանդակային կազմակերպմամբ ու իրականացմամբ մասնաճյուղը նպատակ ունի նպաստելու ուսանողների գիտելիքների ավելացմանը, մասնագիտական կարողությունների զարգացմանը և այլն: Ըստ էության կազմակերպված պրակտիկաներն ուսանողներին հնարավորություն են տալիս աշխատելու մասնագիտական միջավայրում և ձեռք բերելու աշխատանքային փորձ ու հմտություններ, գիտակցելու իրենց ընտրած մասնագիտության կարևորությունն ու նշանակությունն իրենց ապագա գործունեության մեջ: Այն նաև յուրօրինակ հարթակ է գործատուների մոտ ինքնադրսևորվելու և ապագա կարիերան դասավորելու համար, իսկ ավարտական կուրսերի ուսանողների համար պրակտիկան հնարավորություն է տալիս ճշտելու և պլանավորելու ավարտական աշխատանքի բովանդակությունը, հավաքագրել անհրաժեշտ տվյալներ, այն ստեղծում է նախադրյալներ նաև հետբուհական հետագա կրթության համար:

Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժինն իր գործառույթների շրջանակներում համագործակցելով Պրակտիկաների կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության (ՊԿՇՀ) բաժնի հետ 2024թ.-ի մարտին իրականացրել է 2023-24 ուստարվա 2-րդ կիսամյակի սկզբում մասնագիտական պրակտիկա անցած ուսանողների «պրակտիկաների կազմակերպումից և իրականացումից բավարարվածության» ուսումնասիրություն հարցման միջոցով: Հարցումներն իրականացվել են պրակտիկաների համար նախատեսված ստուգարքների օրերին՝ թղթային տարբերակով: Բաժնի աշխատակիցները ստուգարքից հետո բոլոր ուսանողներին հանձնել են անանուն հարցաթերթեր, նրանց տրամադրելով ժամանակ և հնարավորություն հարցաթերթին ազատ և անկաշկանդ պատասխանելու համար:

Նշենք, որ 2023-24 ուստարվա այս պրակտիկաներն ըստ ուսումնական պլանների իրականացվել են բոլոր կրթական ծրագրերի առկա ուսուցման 4-րդ կուրսերի ուսանողների համար (այսինքն, տրամաբանորեն դրանք նախաավարտական մասնագիտական պրակտիկաներ են):

Մասնաճյուղը կարևորելով պրակտիկաների դերն ապագա մասնագետների ձևավորման գործում կնքել է անհրաժեշտ պայմանագրեր գործատու կազմակերպությունների, դպրոցների և տարբեր ոլորտային կառույցների հետ, որոնց արդյունքում ուսանողներն իրենց մասնագիտական պրակտիկաներն անց են կացրել, մասնավորապես.

- Իջևանի թիվ 4 և թիվ 5 հիմնական, Սարիգյուղի և Լուսահովիտ գյուղի միջնակարգ դպրոցներում («Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրեր),
- Սարիգյուղի, Գետահովիտի, Կոթիի և Նորաշենի միջանակարգ դպրոցներում, Իջևանի թիվ 1 մանկապարտեզում և «Հույսի կամուրջ» ՀԿ Իջևանի մասնաճյուղում («Հոգեբանություն» կրթական ծրագիր),

– «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական ՀԿ-ում («Պատմություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրեր),
– ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում, «Արդշինբանկ» ՓԲԸ-ում, «ԱԿԲԱԲԱՆԿ» և «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ներում, ՀՀ վիճակագրական կոմիտեում, ՀՀ պետական եկամուտների կոմիտեում, Իջևանի համայնքապետարանում, Իջևանի և Դիլիջանի հաշվապահական հաշվառման գրասենյակներում, «Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲԸ-ում («Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագիր),
– Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամում («ԳոԹուԴիլի»), Լաստիվեր, Ալանդ, Գետահովիտ ռեզորթներում, «Կամար» հոթելում («Զբոսաշրջություն» կրթական ծրագիր),
– Գիտական հետազոտությունների զարգացման կենտրոնում, «ՅԵՍՈՖԹ» ՍՊԸ-ում, «ԷլԹի Քոդինգ» ՍՊԸ-ում, Զուրաբյանս ՍՊԸ-ում («Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիր),
– ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (Դեկորատիվ կիրառական արվեստ», «Դիզայն» կրթական ծրագրեր)։

Իրականացված հարցումը նպատակ ուներ պարզելու ուսանողների բավարարվածությունը պրակտիկայի կազմակերպումից և իրականացումից ընդհանրապես և մասնավորապես նրանց բավարարվածությունը պրակտիկաների անցկացման վայրից, անցկացման ժամանակահատվածից, տևողությունից, պրակտիկայի ծրագրից, ընդունող կազմակերպության կամ ձեռնարկության աջակցությունից, բուհի կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարի աշխատանքից, վեր հանել պրակտիկայի հետ կապված խնդիրները, հավաքագրել ուսանողների կարծիքները հանդիպած խոչընդոտների և խնդիրների վերաբերյալ, առաջարկությունները՝ իրենց նշած խնդիրների լուծման և պրակտիկայի գործընթացի բարելավման վերաբերյալ։

Նշենք, որ հարցմանը մասնակցել են պրակտիկա անցած առկա ուսուցման 12 կրթական ծրագրերի 170 ուսանողներից **155-ը (91.2%-ը)**, որը շատ բարձր ցուցանիշ է, նաև նշենք, որ ուսանողները բավականին լրջությամբ են մոտեցել գործընթացին և լրացրել են հարցաթերթը՝ անդրադառնալով հարցաթերթի բոլոր հարցերին (4 բաց և 7 գնահատականով հարցեր)։

Աղյուսակում ներկայացված է հարցմանը ուսանողների մասնակցությունն ըստ կրթական ծրագրերի՝ ամփոփված ըստ ֆակուլտետների.

| Թիվ | Կրթական ծրագիր | Ուսանող-ների թիվ | Հարցման ը մասն.թիվ | Մասն. % |
|---|---|---|---|---|
| 1 | Ֆինանսներ (ըստ ոլորտի) | 27 | 21 | **77.8%** |
| 2 | Զբոսաշրջություն | 14 | 12 | **85.7%** |
| | **Տնտեսագիտության ֆակուլտետ (ՏԳՖ)** | **41** | **33** | **80.5%** |
| 3 | Դեկորատիվ-կիրառական արվեստ (ԴԿԱ) | 9 | 9 | **100%** |
| 4 | Դիզայն | 12 | 12 | **100%** |
| | **Կիրառական արվեստի ֆակուլտետ (ԿԱՖ)** | **21** | **21** | **100%** |
| 5 | Պատմություն | 15 | 13 | **86.7%** |
| 6 | Հայոց լեզու և գրականաություն (ՀԼԳ) | 13 | 13 | **100%** |
| 7 | Հոգեբանություն | 12 | 11 | **91.7%** |
| 8 | Ֆրանսերեն լեզու և գրականություն (ՖԼԳ) | 4 | 4 | **100%** |
| 9 | Անգլերեն լեզու և գրականություն (ԱԼԳ) | 20 | 20 | **100%** |
| 10 | Ռուսաց լեզու և գրականություն (ՌԼԳ) | 6 | 6 | **100%** |
| 11 | Տարրական մանկավարժություն և մեթոդիկա (ՏՄՄ) | 21 | 17 | **81%** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **Հումանիտար գիտությունների ֆակուլտետ (ՀԳՖ)** | **91** | **84** | **92.3%** |
| 12 | Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա (ԻԿՄ) | 17 | 17 | **100%** |
| | **Բնական գիտությունների ֆակուլտետ (ԲԳՖ)** | **17** | **17** | **100%** |
| | **Ընդամենը՝** | **170** | **155** | **91.2%** |

Հարցման արդյունքները ՄԿՈԱ բաժնում ամփոփվել և վերլուծվել են ըստ կրթական ծրագրերի և ըստ ֆակուլտետների:

Գնահատականով հարցերն ամփոփվել են ինչպես միջին միավորով (ըստ գնահատման 5-բալանոց համակարգի), այնպես էլ բացարձակ թվերով՝ ըստ գնահատականների, նաև տոկոսներով՝ ընդհանուր քանակությունների հետ համեմատած:

Ուրախությամբ փաստենք, որ վերջին տարիներին պրակտիկաների հետ կապված գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերի արդյունքում էապես բարձրացել է պրակտիկաներից ուսանողների բավարարվածության մակարդակը: Ըստ դիտարկված գրեթե բոլոր հարցերի միջին միավորները գերազանցել են 4.5 միավորը,




բաց հարցերում գերակշռել են դրական կարծիքներ, իսկ լուրջ և անհաղթահարելի խնդիրներ (ըստ ուսանողների) գրեթե չեն եղել, և նրանք լիահույս են, որ պրակտիկան իսկապես կատարել է իր դերը, նպաստել է նրանց մասնագիտական և անձնային որակների բարձրացմանը:

Ներկայացված միջին ցուցանիշները փաստում են, որ ուսանողները գոհ են եղել պրակտիկայի կազմակերպման աշխատանքներից (այստեղ ընդգծված խնդիր ենք տեսնում միայն «Հոգեբանություն» կրթական ծրագրի պրակտիկանտների մոտ՝ միջին միավորը **4.09**), պրակտիկայի իրենց ղեկավարների աշխատանքից, ընդունող կազմակերպության կամ ձեռնարկության աջակցությունից, ընդորում այս ցուցանիշներն էապես բարձր են նախորդ ուսումնասիրությունների արդյունքներից:










Իսկ ահա պրակտիկայի տևողության, անցկացման ժամանակահատվածի և վայրի հետ կապված հարցերը ուսանողների կողմից միշտ բարձրաձայնվել են, այս պրակտիկայի շրջանակներում նույնպես դրանք նշվել են: Բայց այստեղ պետք է նշել, որ պրակտիկաներն իրականացվում են ըստ ուսումնական պլանների, որոնք պարբերաբար վերանայվում են և հնարավորության դեպքում տրվում են համապատասխան հնարավոր լուծումներ:

Ներքևի աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ պրակտիկայի **անցկացման վայրից** բավարարվածության համեմատաբար ցածր միջին միավորներ ունենք հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» (ԱԼԳ), «Ֆրանսերեն լեզու և գրականություն» (ՖԼԳ), «Պատմություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» (ՏՄՄ) կրթական ծրագրերի ուսանողների կողմից: Մասնավորապես, ՖԼԳ կրթական ծրագրի բոլոր 4 ուսանողները պրակտիկայի բարելավման վերաբերյալ բաց հարցերում միանշանակ առաջարկում են փոխել պրակտիկայի անցկացման վայրը, որպեսզի այն տա մասնագիտական փորձ և լինի արդյունավետ: Անցկացման վայրի հետ կապված շեշտել են նաև կիրառական արվեստի ֆակուլտետի «Դիզայն» կրթական ծրագրի 12 ուսանողներից 4-ը:

| Կրթական ծրագիր | Բավարարվածությունը պրակտիկայի. | | |
|---|---|---|---|
| | անցկացման վայրից | անցկացման ժամանակահատվածից | տնողությունից |
| ԱԼԳ /20 | 4.35 | 4.25 | 4.25 |
| ՖԼԳ /6 | 4.00 | 5.00 | 5.00 |
| ՌԼԳ /6 | 5.00 | 4.67 | 4.33 |
| ՀԼԳ /13 | 4.69 | 4.62 | 4.85 |
| Պատմություն /13 | 4.31 | 4.62 | 4.62 |
| Հոգեբանություն /11 | 4.45 | 4.27 | 3.91 |
| ՏՄՄ /17 | 4.38 | 4.56 | 4.47 |
| ԻԿՄ /17 | 4.76 | 4.76 | 4.76 |
| Ֆինանսներ /21 | 4.95 | 4.38 | 4.19 |
| Զբոսաշրջություն /12 | 4.92 | 4.58 | 4.83 |
| ԴԿԱ /9 | 4.44 | 4.11 | 4.44 |
| Դիզ /12 | 4.00 | 4.50 | 4.50 |

Պրակտիկայի **անցկացման ժամանակահատվածից** բավարարված չեն ԱԼԳ, Հոգեբանություն, Ֆինանսներ և ԴԿԱ կրթական ծրագրերի ուսանողները, ընդորում բաց հարցում ժամանակահատվածի անհարմարության վերաբերյալ հիմնավորումներ կամ փոխելու վերաբերյալ առաջարկներ չեն նշվել:

Իսկ ահա պրակտիկայի **տնողության** ավելացման վերաբերյալ առանձնահատուկ նշել են հետևյալ կրթական ծրագրերի ուսանողները. ՌԼԳ (6 ուսանողներից 4-ը), Ֆինանսներ (21 ուսանողներից 11-ը), ԴԿԱ (9 ուսանողներից 7-ը):

Պրակտիկայի անցկացման վայրի, ժամանակահատվածի և տնողության խնդիրների հետ կապված հրավիրում ենք կրթական ծրագրերի ղեկավարների, ամբիոնների և ֆակուլտետների ղեկավարների ուշադրությունը, որպեսզի կրթական ծրագրերի վերանայման ժամանակ հաշվի առնվեն ուսանողների կարծիքները և հնարավորության դեպքում տրվեն համապատասխան լուծումներ:

Նշենք, որ արժանի են ուշադրության պրակտիկայի ծրագրից բավարարվածության արդյունքները: Ներկայացված դիագրամը ցույց է տալիս, որ պրակտիկայի ծրագրի հետ կապված ցածր արդյունքներ ունենք ԱԼԳ, ՖԼԳ և Հոգեբանություն կրթական ծրագրերի ուսանողների մոտ:

Բաց հարցերի զուգահեռ վերլուծությամբ մենք եկել ենք այն եզրակացության, որ ԱԼԳ և ՖԼԳ կրթական ծրագրերի ուսանողների խնդիրը պայմանավորված է պրակտիկայի վայրով և դրա իրականացման ձևով, առաջարկում են ունենալ այլ կազմակերպություններում պրակտիկա անցնելու ընտրության հնարավորություն:

Իսկ «Հոգեբանություն» կրթական ծրագրի պրակտիկանտները բաց հարցերում առանձնապես խնդիրներ չեն բարձրաձայնել, որոշ դեպքերում այն կապված է հոգեբանի ոչ լիարժեք աշխատանքի, պրակտիկայի իրականացման գրաֆիկի հետ:




Առաջարկում ենք համապատասխան աբիոններին ուսանողների հետ քննարկել այդ խնդիրները, գտնել նման արդյունքների պատճառները, իրականացնել քայլեր դրանց հաղթահարման ուղղությամբ:

Այժմ անդրադառնանք հարցաթերթի բաց հարցերին, դրանց պատասխաններին և վերլուծությանը:

**<u>Հարց 1.</u> Որքանո՞վ են ձեր ստացած գիտելիքները բավարարել մասնագիտական պրակտիկայի իրականացման ընթացքում:**

Այս հարցին գրեթե բոլոր կրթական ծրագրերի պրակտիկանտ-ուսանողները տվել են դրական գնահատականներ՝ նշելով, որ մասնաճյուղում ստացած իրենց գիտելիքները բավարարել են մասնագիտական պրակտիկայի ժամանակ անհրաժեշտ առաջադրանքները և աշխատանքները կատարելու համար: Ստացած գիտելիքները հիմնավորվել են ուսանողների վստահությամբ, իրավիճակային խնդիրների լուծման կարողությամբ և ազատ դրսևորման հմտությամբ: Ուսանողներից շատերը փաստել են, որ պրակտիկան բարձրացրել է իրենց վստահությունը մասնագիտական կարողությունների հանդեպ, մեծացրել է սերը և հետաքրքրությունը դեպի մասնագիտությունը:

Իսկ ահա.

- «Հոգեբանություն» կրթական ծրագրի ուսանողները նշել են, որ իրենց գիտելիքները հիմնականում բավարարել են, սակայն զգացվել է խիստ նեղ մասնագիտական գիտելիքների անհրաժեշտություն և փորձի պակաս:
- «Ֆինանսներ» կրթական ծրագրի 21 ուսանողներից 8-ը նշել է, որ իր գիտելիքները մասամբ են բավարարել պրակտիկայի ընթացքում, զգացվել է պրակտիկ գիտելիքների պակաս, իսկ մի քանի ուսանողներ փաստել են, որ պրակտիկայի գործնական աշխատանքները նպաստել են նոր գիտելիքների ձեռքբերմանը և անհատական ունակությունների դրսևորմանը:
- «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 20 ուսանողից 5-ը նույնպես նշել են, որ իրենց գիտելիքները մասամբ են բավարարել, կոնկրետ այդ պրակտիկայի ընթացքում զգացել են թարգմանչական հմտությունների պակաս:

**<u>Հարց 2.</u> Ի՞նչ տվեց Ձեզ մասնագիտական պրակտիկան:**

Այստեղ ուրախությամբ պետք է նշել, որ բոլոր կրթական ծրագրերի ուսանողները գոհունակությամբ նշել են այն ամենի մասին, ինչ տվել է իրենց պրակտիկան: Նրանք նշել են, որ մասնագիտական պրակտիկան իրենց տվել է մասնագիտական փորձ, նոր գիտելիքներ,

տեսական գիտելիքները գործնականում կիրառելու և սեփական կարողություններն ու ներուժը բացահայտելու հնարավորություն, խնդրահարույց իրավիճակներում լուծումներ գտնելու և արագ կողմնորոշվելու ունակություններ:

Բացի այս ընդհանրական ձեռքբերումներից ուսանողները նշել են նաև իրենց նեղ մասնագիտական ձեռքբերումների և որոշ խնդիրների մասին: Մասնավորապես,

- «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական ՀԿ-ում պրակտիկա անցած ուսանողները (ԱԼԳ, ՖԼԳ, ՀԼԳ, Պատմություն կրթական ծրագրեր) նշել են, որ պրակտիկան իրենց տվել է խմբագրական աշխատանքների իրականացման փորձ, թարգմանչական հմտություններ, հոդվածի ստեղծման և խմբագրման կարողություններ, ժամանակի կառավարման, խմբային աշխատանքի իրականացման, օտարալեզու գրականության հետ աշխատելու հմտություններ:
- Մանկավարժները (ՏՄՄ և ՌԼԳ կրթական ծրագրեր) նշել են, որ պրակտիկան իրենց տվել է վստահություն, համարձակություն, լարվածությունը հաղթահարելու և դասարանը կառավարելու հմտություններ, մասնաճյուղում ստացած գիտելիքները գործնականում կիրառելու և աշակերտներին փոխանցելու հնարավորություններ, մասնագիտական աճ, սեր մասնագիտության նկատմամբ և այլն:
- ԻԿՄ-ի ուսանողներն առանձնահատուկ նշել են թիմում աշխատելու ձեռք բերած կարողությունների մասին:
- «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի ուսանողները փաստել են տեսական գիտելիքները գործնականում կիրառելու պրակտիկայի տված հնարավորության, ձեռքբերած նոր գիտելիքների մասին, բանկային գործին, հյուրանոցային աշխատանքներին ծանոթանալու և հմտանալու մասին և այլն:
- Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողները փաստել են, որ պրակտիկան համատեղել են ավարտական աշխատանքի իրականացման հետ, իսկ ամենակարևորը, պրակտիկայի ընթացքում սովորել են աշխատել թիմում և պատվիրատուի հետ:

**<u>Հարց 3.</u> Ի՞նչ խնդիրների եք հանդիպել պրակտիկայի ընթացքում:**

Այս հարցի առաջադրումը նպատակ էր հետապնդում վեր հանելու պրակտիկայի կազմակերպման և իրականացման հետ կապված խնդիրները, սակայն արդյունքները ցույց տվեցին, որ պրակտիկայի հետ կապված հարցում մասնաճյուղն ունի տեսանելի ձեռքբերումներ, որովհետև ուսանողները պրակտիկայի ընթացքում կազմակերպական և իրականացման ոչ մի խնդրի հիմնականում չեն հանդիպել, ամեն ինչ անցել է հարթ, սահուն, պլանավորված, ուսանողները նշել են, որ հաճույքով են գնացել պրակտիկայի վայրեր և մեծ նվիրումով և ոգևորությամբ կատարել իրենց հանձնարարություններն ու առաջադրանքները, իսկ հանդիպած նեղ մասնագիտական խնդիրները հիմնականում լուծվել և հաղթահարվել են ղեկավարների և կցված մասնագետների կողմից: Ներկայացնենք ուսանողների նշած մի քանի խնդիրներ ըստ կրթական ծրագրերի.

- «Վիքիմեդի Հայաստան» գիտակրթական ՀԿ-ում պրակտիկա անցած ուսանողների հիմնական խնդիրները եղել են տեխնիկական՝ պայմանավորված պրակտիկայի առցանց իրականացման և ծրագրի օգտագործման հետ, ինչը ստեղծել է որոշ անհարմարություններ, որոնց հիմնական մասն ընթացքում պրակտիկայի ղեկավարի աջակցությամբ ստացել են համապատասխան լուծումներ: Ուսանողները նաև նշել են, որ ունեցել են թարգմանչական հմտությունների պակաս:
- Մանկավարժների (ՌԼԳ, ՏՄՄ կրթական ծրագրեր) հիմնական խնդիրները կապված են դասարանի կենտրոնացման և կառավարման հետ, իսկ ամենամեծ և կոնկրետ լուծում պահանջող խնդիրը անուշադիր և խնդիր (ԿԱՊԿ) ունեցող աշակերտների հետ աշխատելու հմտությունների պակասն է, որը ուսանողների համար ստեղծել է լարվածություն և սթրես:

- «Հոգեբանություն» կրթական ծրագրի ուսանողների խնդիրները պայմանավորված են եղել հոգեբանի աշխատանքի հետ, խնդիրների նկատմամբ հոգեբանի ոչ բավարար ուշադրության հետ: Նրանցից 2-ը նշել են, որ իրենց չի տրամադրվել գրաֆիկը, նաև նշվել է, որ ժամանակահատվածը բավարար չի եղել ծրագրի իրականացման համար:
- «Ֆինանսներ» կրթական ծրագրի ուսանողների խնդիրները կապված են եղել տեղեկատվության ոչ լիարժեք հասանելիության և դրանց նկատմամբ ուսանողների թույլտվության հետ, ինչը ակնհայտ է պայմանավորված է բանկային ոլորտի գաղտնիության պահանջներով, նաև որոշ ուսանողներ հնարավորություն չեն ունեցել գործնականում դրսևորելու իրենց մասնագիտական կարողությունները, այսինքն կատարելու գործնական աշխատանքներ:

**<u>Հարց 4.</u> Ի՞նչ կփոխեիք պրակտիկայի իրականացման գործընթացում:**

Ներկայացնենք ուսանողների կողմից պրակտիկայի կազմակերպման և իրականացման գործընթացում առաջարկվող փոփոխությունները: Ինչպես նշել ենք վերևում, ուսանողների առաջարկները հիմնականում կապված են պրակտիկայի անցկացման վայրի, ժամանակահատվածի և տևողության հետ:

Ներկայացնենք ուսանողների այլ առաջարկները, որով, ըստ իրենց, ուսանողները ցանկանում են բարձրացնել պրակտիկայի արդյունավետությունը: Մասնավորապես.

- ԱԼԳ, ՖԼԳ, ՀԼԳ և Պատմություն կրթական ծրագրերի ուսանողները դժգոհ են պրակտիկայի առցանց իրականացման տարբերակից և առաջարկում են ավելի հաճախակի դարձնել պրակտիկայի վայրի ներկայացուցիչների հետ առկա հանդիպումները: Մինչև պրակտիկան իրականացնել նախապատրաստական դասընթացներ՝ տեխնիկական և այլ նրբությունների վերաբերյալ: Առաջարկում են իրենց պրակտիկան իրականացնել նաև այլ կազմակերպություններում, այլ ոլորտներում (օրինակ, ԱԼԳ-ի ուսանողներն առաջարկում են պրակտիկան անցկացնել Ամերիկյան գրադարանում, գիտական ՀԱԲ-երում կամ նմանատիպ այլ կազմակերպություններում):
- ՏՄՄ կրթական ծրագրի ուսանողներն առաջարկում են նվազեցնել մեկ դասարանում պրակտիկանտների քանակը և դարձնել 2-3, հնարավորություն տալ դասավանդելու (մուտք գործելու) նաև 1-ից 3-րդ դասարաններում, առանձնահատուկ՝ 1-ին դասարանում:
- Հոգեբանություն կրթական ծրագրի ուսանողներն առաջարկում են փոխել պրակտիկայի անցկացման ժամանակահատվածը, մասնավորապես, կամ այն չլինի 4-րդ կուրսում, կամ համատեղել ավարտական աշխատանքի իրականացման հետ՝ երկարաձգելով տևողությունը: Առաջարկում են ընդլայնել կազմակերպությունների ցանկը և ոլորտների ընտրությունը:
- Ֆինանսներ կրթական ծրագրի որոշ ուսանողների կողմից առաջարկվել է հստակեցնել և ավելի մանրամասն ներկայացնել պրակտիկայի ծրագիրը, հավաքագրել ռեզյումեները՝ ռեզերվային աշխատողների հավաքագրման համար:
- Դիզայն կրթական ծրագրի ուսանողներն առաջարկում են փոխել պրակտիկայի վայրը, կամ ներգրավել այլ կազմակերպություններ և երկարաձգել տևողությունը:

Ամփոփելով հարցման արդյունքները վստահաբար կարող ենք նշել, որ պրակտիկայի կազմակերպման և իրականացման գործընթացը մասնաճյուղում հաջողված է:

Եվ դիտարկելով ուսանողների բարձրաձայնած խնդիրները կրթական ծրագրերի ղեկավարներին, ամբիոնների վարիչներին և ֆակուլտետների ղեկավարներին առաջարկում ենք քննարկել ուսանողների բարձրաձայնած նեղ մասնագիտական խնդիրները և առաջարկները, ավելի խորությամբ անդրադառնալ պրակտիկաների ծրագրերին և դրանց իրականացմանը, տալ հնարավոր լուծումներ:

Իսկ մի քանի խնդիրների համար առաջարկում ենք.

- կրթական ծրագրերի վերանայման ժամանակ հաշվի առնել ուսանողների կարծիքները և պրակտիկայի անցկացման վայրի, ժամանակահատվածի և տևողության հետ կապված խնդիրներին հնարավորության սահմաններում տալ համապատասխան լուծումներ,
- վերանայել կամ հիմնավորել ԱԼԳ կրթական ծրագրի 4-րդ կուրսի պրակտիկայի ծրագիրը,
- ԱԼԳ և ՖԼԳ կրթական ծրագրերի ուսանողների համար մինչև մասնագիտական պրակտիկան կազմակերպել թարգմանչական հմտությունների զարգացմանն ուղղված լրացուցիչ դասընթացներ՝ եթե այդպիսիք ուսումնական պլանով չկան, հակառակ դեպքում տվյալ դասընթացների շրջանակներում ուշադրություն դարձնել ուսանողների թարգմանչական պրակտիկ կարողությունների զարգացման վրա,
- ՏՄՄ և ՌԼԳ ուսանողների հետ տանել հոգեբանական աշխատանք, որպեսզի նրանք կարողանան աշխատել նաև խնդիրներ ունեցող աշակերտների հետ։

ՄԿՈԱ բաժինը հարցման արդյունքների վերլուծություններն ըստ կրթական ծրագրերի և ֆակուլտետների կտրամադրի համապատասխան ստորաբաժանումներին՝ քննարկման և որոշումների կայացման համար։

***Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին***